VII ԴԱՐԻ ԿԵՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԸ

Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Արաբական առաջին արշավանքը Հայաստան, ինչպես հայանի է, տեղի է ունեցել 640 թ.։ Այդ արշավանքի հետևանքով, ինչպես երևում է սկզբնաղբյուրների մեջ եղած տվյալներից, Հայաստանը չնվաճվեց խալիֆայության զորապետների կողմից։ Արաբական զորագնդերը նույն այն ռազմուղիով, որով արշավել էին Հայաստան, վերադարձան Ասորիք՝ բեռնավորված ավարով, տանելով նաև բազմաթիվ գերիներ[1]։ Այս արշավանքը փաստորեն ուներ ավարառուական, անշուշտ, նաև հետախուզական բնույթ, ուստի բնական էր սպասել, որ այն պետք է կրկնվեր։ Այդ հանգամանքը չէին կարող նկատի չառնել հայ իշխանները, նաև բյուզանդացիները, որոնք, արաբական վերահաս արշավանքին հականերգործելու կանխահոգությամբ, ձեռնարկեցին որոշակի քայլեր։ Արաբական առաջին արշավանքի ժամանակ, ինչպես հավաստում է Սեբեոս պատմիչը, հայ իշխաններից Թեոդորոս Ռշտունին գրեթե միակն էր, որ փորձեց զինված հակահարված տալ Այրարատ թափանցած արաբական զորքին[2]։ Անշուշտ, Հայոց կաթողիկոս Ներսես Տայեցին այս պարագան էր նաև նկատի առել, երբ արշավանքից քիչ հետո, 641 թ. պաշտոնապես դիմեց Բյուզանդիայի Կոստանդ կայսեր, խնդրելով Թեոդորոս Ռշտունուն ճանաչել Հայաստանի սպարապետ[3]։ Ուշագրավ է, որ կայսրը ոչ միայն ճանաչեց Թեոդորոս Ռշտունու զորապետությունը Հայաստանում, այլև զորք ուղարկեց այնտեղ՝ Պրոկոպիոս զորապետի գլխավորությամբ, որը, Թեոդորոս Ռշտունու հետ համագործակցելով, պետք է դիմագրավեր արաբների հնարավոր արշավանքին։ Անշուշտ, Կոստանդ կայսրը հասկանում էր, որ նվաճելով Հայաստանը, արաբական զորաբանակները ավելի դյուրությամբ կարող էին պատերազմներ վարել կայսրության դեմ։ Մանրակշիռ այս մտահոգության պատճառով էր, որ կայսրը փոխեց իր վերաբերմունքը հայ նախարարների նկատմամբ։ Կայսեր հրամանով, այն հայ նախարարները, որոնք դեռ մինչև արաբական արշավանքը ձերբակալվել և տարվել էին Կոստանդնուպոլիս, ազատ արձակվեցին և վերադարձան Հայաստան[4]։

Արաբների հաջորդ արշավանքը, ըստ Սեբեոսի վկայության, տեղի է ունեցել «յամին երկրորդի Կոստանդնի, յամսեանն հոռի, որ աւր ԻԳ էր ամսոյն, յաւուր կիւրակէի...»[5]։

Արաբական այս արշավանքի տարեթվի հարցում ուսումնասիրողների մոտ տարակարծություն կա։ Հ. Մանանդյանը Սեբեոսի վերոբերյալ հատվածում «յամին երկրորդի» դարձվածը առաջարկում է ուղղել «յամին Ը երրորդի»[6], որով հիշյալ արշավանքը ընկնում է 650 թ.։

---

1 Տե՛ս Պատմութիւն Սեբէոսի, աշխ. Գ. Վ. Արգարյանի. Երևան, 1979, ԽԲ, էջ 138։

2 Նույն տեղում, էջ 138—139։

3 Նույն տեղում, ԽԴ, էջ 144—145։

4 Նույն տեղում։

5 Նույն տեղում, ԽԵ, էջ 146։

6 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Երկեր. հ. Բ, Երևան, 1978, էջ 532։ Բ. Ն. Առաքելյանը նույնպես արշավանքի տարեթիվ է համարում 650-ը (տե՛ս Բ. Ա ռ ա ք ե լ յ ա ն. Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում և հայերի պայքարն անկախության հա-

Հարկ է նշել, որ հիշյալ արշավանքը, ինչպես կտեսնենք ստորև, ավելի հեռուն դնացող նպատակներ էր հետապնդում, քան էր Հայաստանի նվաճումը, որը այդ նպատակների կենսագործման ճանապարհին մի հանգույց էր։ Հայտնի է, որ Օսման խալիֆայի (644—656 թթ.) օրոք, 640-ական թթ. վերջերից ձեռնարկվեց արշավանք դեպի Իրան և հարակից երկրամասեր, որի հետևանքով VII դարի կեսին լիովին ավարտվեց Իրանի նվաճումը[7]։ 651 թ. արաբները հասան մինչև Ամու Դարյայի ափերը։ Կարելի է կարծել, որ դեպի Հայաստան արաբների հաջորդ խոշոր արշավանքը տեղի է ունեցել հենց այս ժամանակ, Իրանի նվաճմանը զուգահեռ, ըստ երևույթին, 650 կամ 651 թ.։ Այս տեսակետից ուշագրավ հաղորդում ունի Ղևոնդ պատմիչը, ըստ որի խալիֆայության զորքերը դեպի Հայաստան առաջին արշավանքից (640 թ.) հետո «դադարեցին յելանելոյ ի վերայ աշխարհիս Հայոց ամս ԺԱ[8]։ Այս վկայությունից ևս երևում է, որ նշված արշավանքը տեղի է ունեցել Իրանի վերջնական նվաճման ժամանակ, ինչպես պատմագիրն է ասում, առաջին արշավանքից 10 տարի հետո, իմա՝ 650 թ.։

Դրեթե նույն ժամանակ են դնում դեպի Հայաստան արաբ զորապետ Հաբիբի արշավանքը Բելազուրին[9] և Յակուբին[10]։ Թեոփանեսը Հաբիբի այս արշավանքը նշում է 652 թ.[11]։ Ուշագրավ է, որ թե՛ Բելազուրին և թե՛ Թեոփանեսը Հաբիբի արշավանքի հետ միասին հիշում են նաև այն փաստը, որ նույն ժամանակ տեղի է ունեցել բյուզանդացիների արշավանքը դեպի արևելք և Հայաստան։ Իհարկե, 640—650 թթ. միջև արաբները արշավել են Հայաստան, բայց դրանք ունեցել են տեղական և սահմանափակ շրջանակներ։

Հայկական սկզբնաղբյուրներից երևում է, որ VII դարի կեսին Հայաստան կատարած արշավանքի ժամանակ արաբները որոշ դիմադրության են հանդիպել, սակայն իրենց անհամեմատ գերակշիռ զորության շնորհիվ ճնշել են հայ նախարարական զորագնդերի դիմադրությունը։ Համեմատաբար դյուրությամբ է կատարվել նաև Իրանի նվաճումը, քանի որ Բյուզանդիայի դեմ մղած կռիվներից այս երկիրը բավականին թուլացել էր[12]։

Նշված արշավանքի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Սեբեոսը։ Պատմագրի հավաստմամբ՝ «Եւ եղև ի գալ միւսում ամի եկն զաւրն Իսմայելի յԱտրպատական, և բաժանեցան յերիս։ Առաջ մի յԱյրարատ, և առաջ մի ի Սեպհական գնդին կողմանսն, և առաջի մի յԱղուանս։ Արդ՝ որք ի կողմանս Սեպհական գնդին՝ արշաւեալ սփռեցան և հարեալ զամենայն կողմանսն զայնոսիկ սրով սուսերի, առին զաւար և զգերութիւն։ Եւ եկին ժողովեցան ի Հէրևան և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ»[13]։

մտր.—Արմֆանի «Գիտական ժողովածու», XX, Երևան, 1941, էջ 70—71)։ Նույն թվականը ընդունում է նաև Ա. Ն. Տեր-Ղևոնդյանը (տե՛ս А. Тер-Гевондян. Армения и арабский халифат. Ереван, 1977, с. 33—34)։ Ս. Մելիք-Բախշյանը արշավանքի թվականի հարցում այլ կարծիքի է (տե՛ս նրա «Հայաստանը VII—IX դարերում» աշխատությունը, Երևան, 1968, էջ 65—66)։ Է. Լ. Դանիելյանը, որպես արշավանքի թվական, առաջարկում է 647 թ. (տե՛ս նրա «647 թվականի արշավանքը Հայաստան» հոդվածը, «Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 2, էջ 111)։

7 А. И. Колесников. Завоевание Ирана арабами. М., 1982, с. 141—144.

8 Տե՛ս Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց. Ս. Պետերբուրգ, 1887, Գ, էջ 11։

9 Balādhurī. The origins of the islamic state (Kitāb futūh al Buldān). Vol. 1. By P. Hitty. New York, 1916, p. 310, 313—314.

10 Из соч. Я'куби «История». Текст и пер. П. Жузе. Баку, 1927, с. 5.

11 Theophanis Chronographia. Vol. 1. Bonnae, 1839, p. 345.

12 B. Spuler. Iran in früh-islamischer Zeit. Franz Steiner Verlag. Wiesbaden. 1952, S. 5.

13 Տե՛ս Պատմութիւն Սեբէոսի, ԽԴ, էջ 145։ Սեբեոսի երկի XVII դարում ընդօրինակված և առ այսօր հնադույնը համարվող ձեռագրում և նույնի XVI դարի մի ձեռագիր

Հէրևանի (Հերևանի) մասին Սեբեոսի այս հիշատակությունից երևում է, որ դեպի Սեպհական գնդի կողմերն արշաված արաբական զորքը ասպատակներ է սփռել այլևայլ գավառներ, հարձակվել նաև Հէրևանի վրա, բայց այն գրավել չի կարողացել։ Հարկ է նշել, որ ուսումնասիրողները այս հաղորդումը համարում են Երևանի մասին մատենագրական հնագույն վկայությունը, որի հիման վրա նրանք իրավամբ կարծում են, թե VII դարի կեսերին Երևանը եղել է նշանավոր բնակավայր։

Ուսումնասիրողների մի մասն էլ մերժում է Հերևանի և Երևանի նույնացումը (այս մասին խոսք կլինի ստորև), ուստի Սեբեոսի հիշյալ վկայությունը լուրջ կասկածի ու գիտական տարակարծությունների տեղիք է տվել, որոնք, բնականաբար, ինչ-որ չափով հնարավոր է ցրել միայն խնդրի վերարծարծման և դիտական-պատմական տեսանկյունից նորովի իմաստավորման և, հնարավորության շրջանակներում, ճշգրտման միջոցով։

Սեբեոսի հիշյալ հաղորդման հիման վրա կարելի է եզրակացնել, որ արաբական զորքը Ատրպատականում բաժանվել է երեք զորասյան և արշավել հետևյալ ռազմուղիներով. ա) դեպի Հայաստանի Այրարատ նահանգ, բ) դեպի Սեպհական գնդի կողմերը, այսինքն Հայաստանի Վասպուրական նահանգ, գ) Աղվանից աշխարհի ուղղությամբ։

Այնուհետև պատմագիրը գրում է, որ արաբները «եկին ի յՈրդսպու, և ոչ նմա ինչ կարացին առնել։ Գնացին անտի և բանակեցան յԱրծափ, հանդէպ բերդին առ ջրովն։ Եւ սկսան պատերազմել ընդ բերդին, և բաղում աւճիրս վնասուց գործեցին անդ ի բերդէն։ Արդ՝ էր նոցա ի թիկանց կողմանէ ել ի գլուխ անդր յԱսորենայ կողմանէ՝ որում Կախանակտուցն կոչեն»[14]։

Պատմիչի այս հաղորդումից երևում է, որ դեպի Վասպուրական արշաված զորաբանակը շարժվել է նաև Որդսպու—Արծափ—Կախանակտուց—Դարույնք ուղեգծով։ Այն պարագան, որ հիշյալ վայրերից ոչ մեկը Վասպուրականի մեջ չի մտնում, կասկածի տակ է դնում Սեբեոսի այն վկայությունը, ըստ որի արաբական առաջին զորախումբը շարժվել է Սեպհական գնդի կողմերը։ Բնականաբար, ընթերցողը համակվում է զարմանքով, երբ այդ զորասյունը անսպասելիորեն հայտնվում է Երևանի տակ։ Տակավին անցյալ դարի 40-ական թթ. Հ. Շահխաթունյանը տարակուսանք է հայտնել այս իրողության առթիվ[15]։ «Յերևանի» («Հէրաւանի») շուրջն ստեղծված առեղծվածը լուրջ կասկածների տեղիք է տվել նաև հետագա ուսումնասիրողների մոտ։ Տակավին 1926 թ. հրատարակած հոդվածում Թադևոս Ավդալբեգյանը Սեբեոսի հիշատակած «յԵրևանը» փորձում է տեղորոշել ոչ թե Կոգովիտում, ինչին հակված էր Հ. Շահխաթունյանը, այլ Վասպուրականում, դեպի ուր, ինչպես տեսանք, ըստ Սեբեոսի, արշավել էր արաբական առաջին զորախումբը։ Թ. Ավդալբեգյանը Սեբեոսի մոտ Հերևանի հիշատակումը բացատրում է ձեռագրի աղճատմամբ, գտնելով, որ դեպի Վասպուրական արշավելիս այն վայրը, ուր առաջին անգամ կարող էին ներխուժած լինել արաբ զորայինները, պետք է լիներ Առեստ ավանը՝ Վասպուրականի Առբերանի գավառում, Վանա լճից հյուսիս-արևելք։ Արաբների այս արշավանքը զուգադրելով արաբական մեկ այլ, Միջագետքից Հայաստան կատարած արշավանքի հետ, հեղինակը կարծում է, թե դեպի Վասպուրական արաբների արշավուղին ընկած պետք է լիներ հարավից դեպի հյուսիս՝ Առեստ—Բերկրի—Որդսպու—Կոգովիտ—Արծափ արշավագծով, այսինքն փաստորեն Սեբեոսի նշածին հակառակ ուղղությամբ և առաջար-

---

պատառիկում վկայված է «Հէրեան» բառաձևը։ Սեբեոսի Պատմության ձեռագրերի մեծ մասն ունի «յԵրևան» ընթերցվածը (այս ձեռագրերը, բացի մեկից, ընդօրինակված են XIX դ.)։

14 Նույն տեղում։

15 Տե՛ս Հ. Շահխաթունյան. Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գավառացն Արարատայ. հ. Բ, էջմիածին, 1842, էջ 134։

կում է պատմագրի «եւ եկին ժողովեցան ի յԵրեւան»-ը ուղղել «եւ եկին ժողովեցան ի յԱռեստաւան»[16]։

Սակայն այն իրողությունը, որ արաբների առաջին զորախումբը հիշյալ արշավանքի ժամանակ, ինչպես տեսանք, դուրս էր եկել Ատրպատականից, հիմք է տալիս կարծելու, որ նրանց արշավանքի սկզբնակետը չէր կարող լինել Առեստ ավանը, մինչդեռ արաբների մյուս արշավանքի դեպքում նմանօրինակ ռազմուղին միանգամայն հնարավոր էր, որովհետև այդ արշավանքի ժամանակ արաբների ելակետը ոչ թե Ատրպատականն էր, այլ Միջագետքը։

Սեբեոսի «Երևան» արտահայտության շուրջը եղած տարակարծությունը ժամանակի ընթացքում ոչ միայն չվերացավ, այլև ավելի խորացավ։ Ուստի բնական է, որ ուսումնասիրողները պետք է փնտրեին այլ ուղեգիծ, որը ձգվելու էր Ատրպատականից Հայաստան։ Ակադեմիկոս Հ. Մանանդյանի կարծիքով այդ ուղին պետք է անցներ Ատրպատականից Հեր, որտեղից Պետինգևբյան քարտեզի ուղիղ գծով դեպի Արտաշ, ապա Որդսպու անունով բնակավայրի (Դարույնքից մոտ 12 կմ հարավ-արևմուտք) մոտով դեպի Արծափ։ Հ. Մանանդյանը նույնպես «Հերևանը» («Երևանը») համարում է աղճատում, բայց ոչ թե «Առեստաւան»-ի, այլ «Հերաւան» տեղանվան[17]։

Սեբեոսի Պատմությունից երևում է, որ «Հերևանը» ոչ թե արշավանքի սկզբնակետն էր, այլ այն վայրը, ուր հավաքվել էին արաբական զորաջոկատները այս ու այն կողմ սփռվելուց հետո, ուստի Հ. Մանանդյանը կարծում է, որ «ցրված զորախմբերը չէին կարող շարունակել արշավանքը, ունենալով իրենց հետ ավար և գերիներ, այլ նրանք հետ էին դառնալու նորից և հավաքվելու որոշ կենտրոնավայրում», որն էլ հենց «Հերաւանն» է[18]։

Թ. Ավդալբեգյանի և Հ. Մանանդյանի տեսակետները վիճարկվել են նորագույն ուսումնասիրություններում[19]։ Թ. Հակոբյանը, ժխտելով հանդերձ «Յերեան-Առեստաւան» և «Յերևան-Հերաւան» զուգադրումները, կարծում է, որ Սեբեոսը արշավանքը նկարագրելիս կարող էր խախտել արաբների առաջին զորասյան անցած ուղու վրա ընկած բնակավայրերի թվարկման իրական հաջորդականությունը։ Ուստի հեղինակի կարծիքով Երևանի մոտ արաբների հանկարծակի հայտնվելը պետք է բացատրել պատմագրի կողմից նշված տեղանունների մասին նրա ունեցած թյուր պատկերացմամբ։ Սակայն Սեբեոսի Պատմության մյուս մասերն ընթերցելիս չի երևվում, թե նա կարող էր սխալ պատկերացում ունենալ հիշյալ արշավածի վրա ընկած տեղանունների մասին։ Թ. Հակոբյանը միաժամանակ նշում է, որ Առեստը բերդ չի ունեցել և, հետևաբար, որպես բերդ հիշատակվող Երևանը նույնական չի կարող լինել նրա հետ։ Ինչ վերաբերում է «Հերևանը» (կամ «Յերևանը») «Հերավան» ընթերցելուն, ապա նա կարծում է, որ Հերը ոչ մի տեղից հայտնի չէ «Հերավան» անունով։ Սեբեոսի վերը բերված հատվածին անդրադարձել է նաև Միք. Հովհաննիսյանը, որը նույնպես ճիշտ է համարում «Երևան» ընթերցումը, բայց առանց հիմնավորելու նշում է, թե «Սեպհական ղնդի կողմ» ասելով պետք է հասկանալ Դվինը և շրջակայքը[20]։

---

16 Թ. Ավդալբեգյան. Բանասերի օրագրից, Երևանը Սեբեոսի «Պատմութեան» մեջ.—«Հանդես ամսօրյա», Վիեննա, 1926, № 11—12, էջ 588—590։ Տե՛ս նաև նույնի՝ Հայագիտական հետազոտություններ. Երևան, 1969, էջ 146—147։

17 Հ. Մանանդյան. Հին Հայաստանի զլխավոր ճանապարհները. Երևան, 1936, էջ 145—146։

18 Նույն տեղում, էջ 146։

19 Տե՛ս Թ. Հակոբյան. Երևանի պատմությունը. հ. 1, Երևան, 1969, էջ 193—196։ Գ. Արզարյան. «Երևանի» բերդի հնագույն հիշատակությունը.—«Լրաբեր հասարակական գիտությունների», 1972, № 8։

20 Տե՛ս Մ. Վ. Հովհաննիսյան. Հայաստանի բերդերը. Վենետիկ, 1970, էջ 900—901։

«Հերեան» («Երևան») տեղանվան ընթերցվածին անդրադարձել է նաև Գ. Արդարյանը իր վերոնշյալ հոդվածում։ Մերժելով Թ. Ավդալբեդյանի և Հ. Մանանդյանի առաջ քաշած տեսակետները, նա նույնպես այն կարծիքին է, որ «Հերևան»-ի բերդի (որը նա նույնացնում է Հերի հետ) տակ մարտեր է մղել դեպի Վասպուրական արշաված զորաջոկատը։ Հեղինակը կարծում է, որ Այրարատը գրավելու համար արաբներն առանձին զորք էին ուղարկել, ուստի անհնարին էր, որ Սեպհական գնդի կողմերն ուղարկված զորքերը ներխուժեին Այրարատ և մարտեր մղեին Երևանի դեմ։ Գ. Աբգարյանը առաջարկում է «Հերևանը» ընթերցել «Հեր և անդ»[21]։ Է. Լ. Դանիելյանը «Հերևանը» նույնացնում է Հարք գավառի Հերեան գյուղի հետ[22]։ Ըստ երևույթին այս առնչությամբ պետք է նկատի առնել նաև այն իրողությունը, որ Երևանի, ինչպես և շատ այլ բնակավայրերի անուններ, ունեցել են տարբեր արտասանություններ։ Այժմ էլ Արարատյան դաշտում ապրող գյուղացու շուրթերում Երևանը հնչում է «Հերևան» ձևով։ Հայաստանի տարբեր շրջաններում կարելի է հանդիպել Երևանի արտասանության տարբեր ձևեր («Բեվան», «Էրեվան», «Հրեվան» և այլն), որոնցից ամեն մեկը թերևս տեղիք տար նորալուր մեկնության։ Իհարկե, հիշյալ անվանաձևերը, որպես բարբառային ձևեր, բոլորովին էլ նորակերտ չեն և կարող էին օգտագործվել նաև XVI—XVII դդ.։ Գուցե Սեբեոսի երկասիրության վերոհիշյալ երկու ձեռագրերում եղած «Հէրևան» տարընթերցվածը մուծվել է հետագայի ընդօրինակողների կողմից։

Այժմ աշխատենք պարզել, թե դեպի Վասպուրական արշավող արաբական զորագունդն իրո՞ք անբնական հանկարծակիությամբ է հայտնվել Երևանի տակ, ինչպես թվում է առաջին հայացքից, երբ ընթերցում ենք Սեբեոսի վերը նշված հատվածը։ Պետք է կարծել, որ տվյալ շրջանում ռազմաքաղաքական իրավիճակի բերմամբ Երևանի մատույցներում արաբների հայտնվելը հետևանք էր դեպքերի իրական ընթացքի։ Ինչպես տեսանք, արաբները Ատրպատականից իրենց զորուժը ծավալել են երեք արշավագծով, և Երևանի մասին պատմագիրը խոսում է երկրորդ ուղղությամբ իր ուժերը ծավալած զորաբաժնի գործողությունների կապակցությամբ։ Տեսանք նաև, որ արաբական առաջին զորախումբն արշավել էր դեպի Այրարատ։ Թվում է, թե Երևանի դեմ պատերազմած պիտի լիներ հենց այս զորախումբը (այսպես են կարծել ուսումնասիրողները)։ Սակայն դեպի Այրարատ արշաված արաբական զորքի նպատակը ոչ թե Այրարատն էր, ինչպես առաջին հայացքից կարող է թվալ, այլ հետապնդում էր ավելի հեռամետ նպատակներ։ Այս մասին վկայում է հենց ինքը՝ Սեբեոսը, գրելով. «Իսկ այն զաւրն՝ որ ի կողմանս Այրարատեան, եհար սրով մինչև ի կողմանս Տայոց, Վրաց և Աղուանից, առ զաւար և զգերութիւն և եկն էանց ի նախճաւան առ այն զաւր, որ մարտ եդեալ կռուէին ընդ բերդին Նախճաւանի։ Բայց սակայն ոչ կարացին առնուլ զնա։ Առին զբերդն Խրամայ և սատակէին զնոսա սրով, և զկանայս և զմանկունս գերի վարեցին»[23]։ Ուրեմն արաբական առաջին զորամիավորման նպատակը ամենից առաջ Տայքը և Վրաց աշխարհն էր։ Եվ եթե պատմիչը գրում է, թե հիշյալ զորախումբը շարժվել է դեպի Այրարատ, ապա այդ ոչ թե այն պատճառով, որ նրա նպատակն է եղել միայն գրավել Այրարատը, այլ շարժվելու էր դեպի Այրարատ, որտեղով պետք է անցներ Տայք, Վիրք։ Ինչպես տեսանք, վերադարձին է միայն հիշյալ զորախումբը միացել Նախճավանի դեմ պատերազմող զորասյանը։

Այսպիսով արաբական առաջին զորամիավորումն արշավել է Տայք և Վրաց աշխարհ, երրորդը՝ Աղվանք, իսկ երկրո՞րդը։ Երկրորդ զորախումբը, ըստ Սեբեոսի, արշավել է «ի կողմանս Սեպհական գնդին», այսինքն դեպի

21 Տե՛ս Գ. Աբգարյան. նշվ. աշխ., էջ 30։
22 Է. Լ. Դանիելյան. նշվ. աշխ., էջ 114։
23 Սեբէոս, Խե, էջ 146։

Վասպուրական։ Սակայն այդ զորամիավորման նպատակը ոչ միայն Սեպհական գնդի կողմերն էին, այլև բովանդակ Հայաստանը։ Որովհետև Վասպուրականը անմիջականորեն սահմանակցում էր Ատրպատականին, ուստի բնական է, որ հիշյալ զորաբանակը պետք է արշավեր նախ «ի Սեպհական գնդին կողմանս», նոր ապա դեպի Հայաստանի մյուս կողմերը։ Տվյալ դեպքում Վասպուրականը այն երկրամասն էր, որի միջով առաջին հերթին պետք է ձգվեր հիշյալ զորաբանակի արշավուղին։

Պատմագրի այն խոսքերը, թե դեպի Սեպհական գնդի կողմերը (Վասպուրական) արշավող զորախումբը «արշաւեալ սփռեցան և հարեալ զամենայն կողմանսն զայնոսիկ սրով սուսերի, առին զաւար և զգերութիւն»[24], ցույց է տալիս, որ Վասպուրականով դեպի Հայաստանի այլևայլ շրջաններն արշաված զորաբանակը ասպատակներ է սփռել զանազան կողմեր։ Հետևաբար, այդ զորքը ունեցել է մեկից ավելի (հավանորեն երեք) միավորումներ։ Այնուհետև պատմագիրը գրում է, որ արաբների հիշյալ բանակի զորայինները՝ «եկին ժողովեցան ի Հէրևան, և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ։ Եկին ի յՈրդսպու, և ոչ նմա ինչ կարացին առնել»[25]։ Այս հատվածի «եւ եկին ժողովեցան ի Հէրևան» դարձվածը, որքանով որ կարելի է հասկանալ, պետք է ունենա «եվ եկան պաշարեցին Երևանը» իմաստը։ Ըստ երևույթին հիշյալ զորախմբի ջոկատներից միայն մեկն է եկել և պաշարել Երևանը։ Այլ կերպ վերջինս որքան էլ ուժեղ բերդ ունենար, չէր կարող դիմակայել արաբների ամբողջ զորախմբի ճնշմանը։ Ի դեպ, արաբական զորքը չի կարողացել գրավել նաև Որդսպուն։ Ճիշտ է, Սեբեոսը ավելի շատ հիշում է Հայաստանում արաբների անհաջողություններր, իսկ հաջողությունների մասին վերապահումներով է խոսում, սակայն տվյալ դեպքում պատմիչը հաղորդում է դեպքերի իրական ընթացքի մասին։ Դա երևում է նաև նրա երկի հետագա շարադրանքից։ Վերը նշված անցքերից հետո,—շարունակում է պատմագիրը, արաբ զորայինները «գնացին անտի և բանակեցան յԱրծափս, հանդէպ բերդին առ ջրովն։ Եւ սկսան պատերազմել ընդ բերդին, և բազում աւճիրս վնասուց գործեցին անդ ի բերդէն»[26]։ Այստեղ պարզ ու որոշ ասված է, որ Որդսպուից արաբական զորաջոկատը շարժվել է Արծափ, որը, ինչպես հայտնի է, նույնպես Այրարատի Կոգովիտ գավառում էր։ Պատմիչի հետագա նկարագրությունից երևում է, որ Արծափը նույնպես գիմադրել է արաբական հիշյալ զորաջոկատին։ Որ Արծափը չի հանձնվել մի առ ժամանակ, երևում է դարձյալ Սեբեոսի վկայությունից։ Պատմիչը գրում է, որ նրա պաշտպանները բերդի թիկունքի կողմից (ուր ելք կար դեպի Արծափի հարավակողմում գտնվող Կախանակտուց բլուրը) մարդիկ են ուղարկել մոտակայքի Դարույնք բերդը, խնդրելով օգնական զորք։ «Արդ՝ իշին ընդ այն արք,—գրում է պատմիչը,—ի վայր ի բերդէն՝ երթալ խնդրել ի բերդէն Դարաւնից զաւր յաւգնականութիւն իւրեանց։ Եւ ետ նոցա Սմբատ Բագրատունի, որդի Վարազ Սահակայ՝ արս Խ։ Եւ գնացեալ ի գիշերի ելին ի բերդն և ոչ զգուշացան տեղւոյն»[27]։ Ինչպես տեսնում ենք, Սմբատ Բագրատունի իշխանը, որպես օգնական ուժեր, ուղարկում է ընդամենը 40 հոգու, անշուշտ, նկատի ունենալով հիմնականում երկու հանգամանք. նախ որ Արծափի դեմ կռվող արաբական զորաջոկատը, իշխանի կարծիքով, մեծ ուժ չէր ներկայացնում, և ապա նաև Դարույնքի պաշտպանության հոգսերը ստիպում էին բերդում պահել պատկառելի քանակի զորուժ։

Արծափի գրավման մասին հիշատակում է նաև Ղեոնդը։ Երկու պատմագիրների տվյալները լրացնում են միմյանց։ Ղևոնդի հաղորդած տեղեկություններից կարելի է մակաբերել, որ դեպի Կոգովիտ, Արծափ արշավել

24 Նույն տեղում, եԴ, էջ 145։
25 Նույն տեղում։
26 Նույն տեղում։
27 Նույն տեղում։

է Հայաստան ներխուժած արաբական զորքի առանձին զորախումբ։ Ըստ նրա հաղորդած տվյալների, Հայաստան արշաված զորքը շարժվել է երեք ուղղություններով։ «Եւ,—գրում է պատմիչը,—իբրև հասին ի սահմանս Հայոց՝ յերիս բաժանեալ առաջս՝ սփռեցան յասպատակս իւրեանց։ Առաջ մի հատեալ ընդ կողմն Վասպուրական աշխարհին՝ առին զաւանս և զամրոցս որ մինչև ի Նախջաւան քաղաք. և առաջ մի ընդ կողմն Տարօնոյ։ Եւ միւս առաջն հասեալ ի Կոգովիտ՝ պաշարէին զամրոցն Արծափայ»[28]։

Ղևոնդի հաղորդումից նույնպես պարզ է դառնում, որ դեպի Այրարատ արշավել է այլ զորախումբ, իսկ դեպի Վասպուրական՝ բոլորովին ուրիշ զորամիավորում։ Դեպի Վասպուրական արշաված արաբական զորքը, ինչպես տեսանք Ղևոնդի վերոբերյալ հաղորդումից, գրավել է մինչև Նախճավան ընկած շրջանները։ Ընդ որում Սեբեոսի «առ այն զաւր, որ մարտ եղեալ կռուէին ընդ բերդին Նախճաւանի»[29] դարձվածը ըստ երևույթին վերաբերում է հենց Վասպուրականի կողմերն արշաված զորաթևին։ Դիտելի է, որ այս զորամասը նույնպես անհաջողության է մատնվել (Նախճավանի բերդապարիսպների տակ), ուստի դեպի Տայոց աշխարհ, Վրաստան արշաված արաբական զորքը (անշուշտ, նրա մի մասը), ինչպես վերևում տեսանք, օգնության է հասել նրան։ Փաստորեն թե՛ Սեբեոսը և թե՛ Ղևոնդը, խոսելով արաբական այս արշավանքի մասին, նշում են երեք զորախումբ։ Երկու պատմիչների մոտ էլ ելակետը Վասպուրականը՝ Սեպհական գնդի կողմանքն է, ապա Այրարատը (Կոգովիտ գավառը և այնտեղ գտնվող Արծափ բնակավայրը)։

Սեբեոսի վկայությունից կարելի է հետևեցնել, որ Երևանն արդեն 640-ական թթ. եղել է բերդաքաղաք, որը կարողացել է կազմակերպված դիմադրություն ցույց տալ արաբական ոչ մեծ զորաջոկատին։ Ըստ երևույթին, նույն ժամանակին է վերաբերում նաև Երևանի բերդի մասին Հովհաննես Դրասխանակերտցու հետևյալ վկայությունը. «Յայնմ ժամանակի ասեն լինել զկռիւն, որ ի քաղաքագիւղն Երեվանի, զոր և բաւական քեզ ուսուցանեն զայնր պատերազմի զհանգամանս որ նախ քան զմեզ զնա պատմագրեցին»[30]։ Հովհաննես Դրասխանակերտցին նշում է, որ հիշյալ կռվի մասին իրենից առաջ գրել են պատմագիրները։ Անշուշտ, առաջին հերթին ի նկատի ունի Սեբեոսին, որի մոտ եղած «Երևանն» է հենց տեղ գտել Դրասխանակերտցու պատմության մեջ։

Խալիֆայության կողմից Իրանի նվաճումը և VII դարի կեսի արշավանքը Հայաստան վճռորոշ նշանակություն ունեցան նրա համար։ Իրանի հնազանդեցումից հետո խալիֆայության լուրջ հակառակորդն էր Բյուզանդիան։ Արաբա-բյուզանդական հակամարտության վերարծարծման պայմաններում հույժ կարևոր դեր էր վերապահվում Հայաստանին։ Ուստի մրցակիցները համապատասխան քայլերի են դիմում հայ նախարարներին իրենց կողմը գրավելու համար։ Կայսրության կողմից այս ուղղությամբ կարևոր քայլ էր հայերին առաջարկված դավանական միության ծրագիրը, որը, իհարկե, վերջին հաշվով մերժվեց[31]։ Այն փաստը, որ արաբական արշավանքների ընթացքում հնարավոր դարձավ, որ Հայաստանը ժամանակավորապես թոթափի պարսից և բյուզանդական լուծը, հայ նախարարների մեծ մասին՝ Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ, դրդեց նույնիսկ դաշինքի մեջ մտնել արաբների հետ։ Այդ դաշինքը որոշ առումով բարերար ազդեցություն ունեցավ Հայաստանի համար։ Հարկ է նշել, որ դաշինքը հայերի և արաբների միջև հնարավոր դարձավ Իրանի գրավումից և դեպի Հայաստան արաբների ձեռնարկած վերոհիշյալ արշավանքից հետո։

---

28 Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի հայոց. Դ, էջ 11։

29 Սեբէոս, Եռ, էջ 146։

30 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 92։

31 Սեբէոս, Եռ, էջ 148։

АРАБСКОЕ НАШЕСТВИЕ В АРМЕНИЮ В СЕРЕДИНЕ VII ВЕКА И ВАСПУРАКАН

В. М. ВАРДАНЯН

Резюме

В середине VII в. рать Арабского халифата двинулась из Атрпатакана по следующим направлениям: а) в сторону Айрарата; б) по направлению к Васпуракану; в) в Албанию. Как передает историк VII в. Себеос, второй отряд не только совершил набег на Васпуракан, но и осадил Ереван. Это свидетельство дает повод для гипотетических заключений. Считается неубедительным, что второй отряд внезапно оказался под Ереваном, и делаются попытки в этом топониме у Себеоса найти иной смысл. По мнению некоторых исследователей, в данном контексте имя «Ереван» следует читать как «Ареставан» или «Гераван», «Гераванд», «Гереан» и т. д. Однако указания Себеоса раскрывают причину, побудившую второй отряд, двинувшийся к Васпуракану, осадить Ереван. Истинной целью первого отряда, вторгшегося в Айрарат, являлся не сам Айрарат, а завоевание Тайка и Грузии, к которым в данном случае можно было направиться, пройдя через Айрарат. А конечной целью второго отряда был не только Васпуракан, но и Армения вообще (разумеется, в том числе и регион Еревана). Очевидно, войско, вторгшееся в Армению через Васпуракан, состояло из нескольких отрядов, один из которых осаждал Ереван.